



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«16» 07 2021թ
No 1600

ՔԱՂԱՔԱՅԻ ԳՐԻԳՈՐ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՛ՆԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՄՈԼԴՈՎԱԿԱՆ Փ.,46/2,Շ,34 (0062)
ՀԾՀ 3510910809

Հարգելի հարկ վճարող

«Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 13/04/2021 թվականին օտարվել է 06/02/2020 թվականին ձեռք բերված 2007 թվականի արտադրության, 272 ձիաուժ հզորությամբ MERCEDES-BENZ CLK 350 մակնիշի տրանսպորտային միջոցը «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 02811826) 300,000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով:


«Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 29-րդ հոդվածի համաձայն՝ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (գանձելու) և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը:

Հաշվի առնելով այն, որ «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում հարկային գործակալ՝ Ձեզ մոտ վերը նշված օտարման գործարքի մասով առաջանում է եկամտային հարկ հաշվարկելու և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է մինչև 2022 թվականի ապրիլի 20 ներառյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել (ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածով) 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափով:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Դուք իրավունք ունեք հարկային մարմին ներկայացնել բացատրություններ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՄԵՐԱԼ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԹԻՎ 4 ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ  ՆԱՐԻՆԵ ՍԱՔԵՅԱՆ

Կատարող՝
Կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժին
Գլխավոր հարկային տեսուչ Աննա Շահբազյան
Հեռ.՝ 011 544055 ներքին 4048
Էլ. փոստի հասցե՝ secretariat@taxservice.am

